ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

10.06.2019թ.
Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան
անդամներ՝ Վարդուհի Վարդանյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյան
Ռոմելա Հարությունյան
Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Սիմոնյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

1.1 04.06.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում էր առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներ՝ **«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ին և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին** առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

(Մ. Սիմոնյան)

2.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 03.06.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ **«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

<u>3. Ընտրված մասնակից հայտարարելու մասին.</u>

(Մ. Սիմոնյան)

3.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ն-1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն-2-րդ չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Ռոմելա Հարությունյան

Անուշ Մարտիրոսյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան